Հավելված 3
«ԵՔ-ԴՄ-ՖԳ 01/24»* ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

«Ամենամյա երիտասարդական ֆորում»
դրամաշնորհային ծրագրի

ԱՌԱՋԱՐԿ

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը	«Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ
Հապավումը (եթե առկա է)	ՀԱԵ
Ծրագրի անվանումը	Ամենամյա երիտասարդական ֆորում
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	« 01» «հուլիս» 2024թ – « 30» «սեպտեմբեր» 2024թ
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	Հրազդան կամ հարակից տարածքներ /Աղվերան, Ծաղկաձոր կամ այլ համարժեք/
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Գրիգորի Երիցյան
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Աննա Թովմասյան
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ)	ՀՀ, ք. Երևան, Պրահայի 18, 0082, 010 583399, apy@apy.am
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)	4,697,400 ՀՀ դրամ

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

Երիտասարդական ֆորումի նպատակն է համախմբել ՀՀ 10 մարզերից 120 երիտասարդների և երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչների՝ քննարկումներ իրականացնելու Երիտասարդական քաղաքականության մշակման անհրաժեշտության, երիտասարդության, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների և պետության միջև իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտության և նրանց կարիքների ու պետությունից ունեցած ակնկալիքների վերաբերյալ:

120 մասնակիցները (25%-ը ԼՂ բռնի տեղահանված երիտասարդներ) 2-օրյա ֆորումի շրջանակներում հնարավորություն կունենան բարձրաձայնելու իրենց հուզող խնդիրների մասին և տարբեր աշխատարանների շնորհիվ առաջարկելու լուծումներ ուղղված հենց այդ խնդիրներին: ֆորումի շրջանակներում իրականացվող պանելային քննարկումը, էքսպերտային հանդիպումը և դասընթացները համապարփակ հենք և կառուցողական մոտեցումներ կստեղծեն երիտասարդների շրջանում:

Ֆորումին հրավիրված կլինեն նաև ոլորտային էքսպերտներ, ովքեր մանրամասն կներկայացնեն երիտասարդության, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների և պետության միջև իրավահարաբերությունների գործընթացների և անհրաժեշտ քայլերի հաջորդականության մասին:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում

Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Ամենամյա երիտասարդական ֆորումի կազմակերպումը կարևոր է մի քանի պատճառներով՝

1. **Երիտասարդների հզորացում և մասնակցություն՝**
- Ստեղծել հարթակ երիտասարդների համար՝ արտահայտելու իրենց կարծիքը, գաղափարները և մտահոգությունները:
- Խրախուսել ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին՝ հնարավորություն տալով երիտասարդներին ձայն ունենալ իրենց պետական երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման բոլոր փուլերում:

2. **Քաղաքականության մշակում և շահերի պաշտպանություն՝**
- Երիտասարդները կարող են քննարկել և նպաստել իրենց անմիջականորեն վերաբերող քաղաքականությունների մշակմանը:
- Իրականացնել շահերի պաշտպանություն՝ խթանելով քաղաքացիական ներգրավվածության և սոցիալական պատասխանատվության մշակույթին:

3. **Հմտությունների զարգացում՝**
- Ստեղծել հմտությունների զարգացման հնարավորություններ՝ սեմինարների, վերապատրաստման դասընթացների և համագործակցային նախագծերի միջոցով:
- Բարելավել առաջնորդության, հաղորդակցման և խնդիրների լուծման հմտությունները՝ պատրաստելով կյանքի տարբեր ասպեկտներում ակտիվ դերակատարման համար:

4. **Համայնքի ստեղծում և համագործակցություն՝**
- Ստեղծել երիտասարդների միջև համագործակցություն՝ ոչ միայն իրենց իսկ մարզերում, այլև ամբողջ Հայաստանում:
- Զարգացնել երիտասարդների շրջանում ուժեղ և աջակցող համայնքներ:
- Ստեղծել երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցություն՝ խրախուսելով համատեղ նախաձեռնությունները դրական սոցիալական ազդեցության համար:

5. **Երիտասարդների առաջնորդություն՝**
- Խրախուսել երիտասարդ առաջնորդների զարգացումը, ովքեր կարող են դրական փոփոխություններ առաջացնել իրենց համայնքներում:
- Երիտասարդներին հնարավորություն ընձեռել առաջնորդի դեր ստանձնելու ֆորումում և դրանից դուրս:

6. **Ապագային միտված հասարակության կառուցում՝**
- Երիտասարդների շրջանում ձևավորել պատասխանատվության և ներգրավվածության զգացում՝ նպաստելով ավելի տեղեկացված և ապագա մտածող հասարակության ստեղծմանը:
- Ստեղծել միջավայր, որտեղ տարբեր տեսակետներ են կիսվում՝ հանգեցնելով հանդուրժողականության և ներառականության աճին:

Երիտասարդական ֆորումը ծառայում է որպես դրական փոփոխությունների կատալիզատոր՝ տրամադրելով հարթակ երիտասարդների շրջանում հզորացման, շահերի պաշտպանության,

հմտությունների զարգացման և համայնքի կառուցման համար: Նրանք կենսական դեր են խաղում ավելի ներառական, տեղեկացված և ներգրավված հասարակության ձևավորման գործում:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն ստեղծվել է 2009 թվականին՝ նպատակ ունենալով ներգրավել երիտասարդներին ժողովրդավարական հասարակության կայացման գործում, նպաստել երիտասարդների ինքնազարգացմանը, ակտիվ մասնակցությանը, կարողությունների և գիտելիքների զարգացմանը և աջակցել երիտասարդների ներգրավվածությանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Կազմակերպության հիմնական նպատակն է ներգրավել խոցելի երիտասարդներին և երիտասարդ կանանց հասարակական, քաղաքական, քաղաքացիական և տնտեսական կյանքում, ակտիվացնել երիտասարդներին քաղաքացիական հասարակության կայացման գործում և նպաստել Հայաստանում ոչ ֆորմալ կրթության, կամավորության մշակույթի զարգացմանը: Իր տեղական և միջազգային կրթական ծրագրերի միջոցով կազմակերպությունը հարյուրավոր երիտասարդների համար ստեղծում է ինքնազարգացման և կատարելագործման հնարավորություններ:

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն իրականացրել է ավելի քան 600 ծրագրեր՝ ներգրավելով շուրջ 150. 000 երիտասարդների: Շուրջ 15 տարի է, ինչ կազմակերպությունն աջակցում, ոգեշնչում և ներգրավում է երիտասարդներին՝ լսելի դարձնելով նրանց ձայնը:

Կազմակերպության նպատակներն են՝

- Երիտասարդների ակտիվ քաղաքացիության և հանրային կյանքին մասնակցության մակարդակի բարձրացում՝ երիտասարդների կարողությունների զարգացման և նրանց շրջանում ժողովրդավարական արժեքների և սկզբունքների խթանման միջոցով:
- Երիտասարդների, կանանց և խոցելի խմբերի տնտեսական մասնակցության խթանում և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծում՝ զբաղվածության և ձեռներեցության ոլորտներում նորարարական ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:
- Երիտասարդների շրջանում հասարակական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական, մշակութային և թվային մասնակցության մակարդակի բարձրացում՝ ոչ ֆորմալ կրթական և կամավորական ծրագրերի իրականացման միջոցով:
- Մարդու իրավունքների, ժողովրդավարական կառավարման, խտրականության բացառման, գենդերային հավասարության, մեդիագրագիտության, կիբերանվտանգության և այլ առանցքային թեմաների վերաբերյալ երիտասարդների իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ նրանց գիտելիքների և արժեքների ամրապնդման միջոցով:
- Հայաստանում երիտասարդական աշխատանքի և ոչ ֆորմալ կրթության զարգացում և ճանաչելիություն, ինչպես նաև կամավորության մշակույթի զարգացում:
- Խոցելի և սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների տարբեր խմբերի իրավունքների պաշտպանություն, հզորացում և ներառում՝ լրացուցիչ աջակցության տրամադրման և շահերի պաշտպանության միջոցով:
- Տեղական և միջազգային լավագույն փորձի հիման վրա երիտասարդական ոլորտի զարգացում, միջազգային երիտասարդական համագործակցության խթանում, միջմշակութային երկխոսության և երիտասարդների շարժունության խրախուսում:

Կազմակերպությունը ձգտում է նպաստել Հայաստանում այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ՝

- առաջադեմ, կիրթ, մրցունակ և լայն մտահորիզոն ունեցող երիտասարդները դրական փոփոխությունների շարժիչ ուժն են,
- երիտասարդներն իրացնում են իրենց ամբողջական ներուժը,
- երիտասարդների ձայնը լսելի է,

- երիտասարդներն ակտիվորեն մասնակցում են քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքին,
- երիտասարդներն ազդում են որոշումների կայացման գործընթացների վրա:

Կազմակերպության գործունեության հիմական ուղղություններն են՝

Քաղաքացիական կրթություն: Տրամադրել երիտասարդներին անհրաժեշտ հմտություններ և գործիքներ՝ ակտիվ քաղաքացիական մասնակցության համար, ներառել սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդներին կարողությունների զարգացման ծրագրերում, հասնել քաղաքացիական մասնակցությունը խթանող քաղաքականությունների մշակմանը և բարելավմանը:
Զբաղվածություն և ձեռներեցություն: Նպաստել սոցիալապես և տնտեսապես խոցելի, երիտասարդների մրցունակությանն աշխատաշուկայում, երիտասարդների համար ստեղծել աշխատանքի և ձեռներեցության ավելի լայն հեռանկարներ, բարելավել երիտասարդների ձեռնարկատիրական հմտությունները:
Ներառում և բազմազանություն: Նպաստել երի- տասարդական աշխատանքի ներառականության բարձրացմանը, մշակել ներառական երիտասար- դական աշխատանքի իրականացման գործիքներ վերապատրաստել երիտասարդական աշխատողներին և երիտասարդական կազմակերպություններին ներառականության և բազմազանության թեմայով:
Մարդասիրական աջակցություն: Կամավորների ներգրավման միջոցով թիրախային օգնություն տրամադրել Հայաստանի տարբեր մարզերում բնակվող խոցելի անձանց, համագործակցել և համակարգել մարդասիրական աջակցությունը տեղական և պետական մարմինների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:
«Ալտերնատիվ» երիտասարդական կենտրոն: «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ կողմից 2022-ին Երևանում հիմնադրվել է «Ալտերնատիվ» երիտասարդական կենտրոնը, որն իր տեսակի մեջ առաջինն է Հայաստանում: Կենտրոնը ներառական միջավայր է 14-ից 30 տարեկան դեռահասների և երիտասարդների համար: Այն երիտասարդներին, երիտասարդական կազմակերպություններին, խմբերին և նախաձեռնություններին անվճար տրամադրում է կահավորված և տեխնիկապես հագեցած կենտրոնական, տարածք՝ հանդիպելու, սովորելու, ներգրավվելու և պարզապես ժամանցի համար: «Ալտերնատիվ»-ը երիտասարդների գաղափարների քննարկման, պլանավորման և իրականացման վայր է: Կենտրոնը բաց է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից 18:00-ը:

Ստորև ներկայացվում է «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ կողմից իրականացվող և իրականացված ծրագրերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն:

Անվանումը:	**«Ալտերնատիվ» երիտասարդական կենտրոնի հիմնադրում**
Դրամաշնորհատուն:	Շվեդիայի փոստային հիմնադրամ
Իրականացման վայրը:	ք. Երևան, Հայաստան
Բյուջեն:	105,000,000. 00 դրամ
Ժամկետները:	2022 - 2025
Նպատակը:	Երևանում ստեղծել երիտասարդական կենտրոն, որը տարեկան կներգրավի 14-ից 30 տարեկան 2000 երիտասարդների և կաջակցի երիտասարդների և երիտասարդական նախաձեռնությունների մշակմանն ու իրականացմանը:

Արդյունքները:	• Երևանում ստեղծվել է իր տեսակում առաջին ներառական երիտասարդական միջավայրը, որը տարեկան 2000 երիտասարդի հնարավորություն է տալիս մասնակցել ոչ ֆորմալ կրթական ծրագրերի, իրականացնել սեփական գաղափարները՝ դրանց համար ստանալով ֆինանսավորում: • Կենտրոնը գործարկել է իր «Երիտասարդական նախաձեռնությունների աջակցման հիմնադրամ»-ը, որը ֆինանսավորում է անհատ երիտասարդների, երիտասարդական խմբերի, որ ֆորմալ նախաձեռնությունների և երիտասարդական ՀԿ-ների համայնքային ծրագրերը:

Անվանումը:	**«Երիտասարդների հզորացում՝ հանուն Հայաստանում դրական փոփոխությունների»**
Դրամաշնորհատուն:	Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզեր
Իրականացման վայրը:	Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր և Երևան
Բյուջեն:	158,000,000.00 ՀՀ դրամ
Ժամկետները:	2023-2025
Նպատակը:	Հզորացնել Հայաստանի 10 մարզերի երիտասարդներին՝ դառնալու իրենց և Հայաստանի ապագայի կերտման ակտիվ մասնակիցները, ինչպես նաև բարեփոխել և ուժեղացնել Հայաստանի երիտասարդական ոլորտը՝ ոլորտի դերակատարների՝ երիտասարդների, երիտասարդ առաջնորդների, երիտասարդական աշխատողների, երիտասարդական կազմակերպությունների և նախաձեռնությունների, ինչպես նաև երիտասարդության ոլորտում քաղաքականություն մշակողների և որոշում կայացնողների կարողությունների զարգացման միջոցով:
Արդյունքները:	Ծրագիրը մեկնարկել է 2023 թվականի ավարտին:

Անվանումը:	**«Հրատապ վաուչերային աջակցություն հակամարտությունից տուժած երեխաներին»**
Դրամաշնորհատուն:	ՅՈՒՆԻՍԵՖ, Եվրոպական ներդրումային բանկ, ՄԱԿ-ի Արտակարգ իրավիճակների արձագանքման կենտրոնական հիմնադրամ
Իրականացման վայրը:	Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզեր և Երևան
Բյուջեն:	457,149,732.00 ՀՀ դրամ
Ժամկետները:	2023-2024
Նպատակը:	Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բնակվող 0-9 տարեկան 14150 երեխաների տրամադրել 25.000 ՀՀ դրամ արժողությամբ հագուստի ձեռքբերման վաուչերներ:
Արդյունքները:	• ՀՀ մարզերում և Երևանում բնակվող Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 0-9 տարեկան բոլոր երեխաները ստացան 25.000 ՀՀ դրամ արժողությամբ վաուչերներ՝ առաջնային անհրաժեշտության ձմեռային հագուստ ձեռք բերելու համար:

Անվանումը:	Հմտությունների բարելավում՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցման միջոցով Վայոց ձորի, Գեղարքունիքի և Սյունիքի սահմանամերձ համայնքներում
Դրամաշնորհատուն:	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
Իրականացման վայրը:	Վայոց ձորի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզեր
Բյուջեն:	38,739,690.00 ՀՀ դրամ
Ժամկետները:	2021
Նպատակը:	Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքների երիտասարդներին և կանանց ընդգրկում եռամսյա վճարովի աշխատանքի վրա հիմնված ուսուցման ծրագրերում:
Արդյունքները:	• Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանամերձ համայնքներում բնակվող 70 երիտասարդներ և կանայք զարգացրեցին իրենց անձնային և մասնագիտական կարողությունները՝ աշխատանքի անցնելով իրենց համայնքներում գործող գործատուների մոտ:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Երիտասարդական ֆորումի նպատակն է համախմբել ՀՀ 10 մարզերից 120 երիտասարդների և երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչների՝ քննարկումներ իրականացնելու Երիտասարդական քաղաքականության մշակման անհրաժեշտության, երիտասարդության, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների և պետության միջև իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտության և նրանց կարիքների ու պետությունից ունեցած ակնկալիքների վերաբերյալ:

Խնդիրները՝

- Կազմակերպել ՀՀ 10 մարզերից 120 երիտասարդների մասնակցությունը,
- Բարձրացնել մասնակիցների իրազեկվածությունը երիտասարդական քաղաքականության մշակման և դերակատարների վերաբերյալ,
- Վեր հանել երիտասարդության, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների կարիքները,
- Իրազեկել երիտասարդական քաղաքականության մասին միջազգային օրենքների, իրավական ակտերի վերաբերյալ:
- Ստեղծել հարթակ երիտասարդների կարողությունների զարգացման համար:

Արդյունքները՝

- 400 երիտասարդի դիմում-հայտի ներկայացում
- 120 երիտասարդի ՀՀ 10 մարզերից մասնակցություն
- 30 ԼՂ բռնի տեղահանված երիտասարդի մասնակցություն
- 4 աշխատարանների իրականացում
- Մասնակից երիտասարդների 70%-ի քաղաքականությունների մշակման և շահերի պաշտպանության իրականացման վերաբերյալ գիտելիքի ձեռք բերում

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .

Գործողություն 1. Նախապատրաստական փուլ I: Ծրագրային I-II ամիսների ընթացքում կստեղծվեն ֆորումի մասնակցության հայտերը, կիրականացվի նյութերի դիզայն, որից հետո կտեղադրվի և կտարածվի ֆորումի հայտարարությունը: Մասնակիցների ընտրության համար մշակվելու են հատուկ չափորոշիչներ, որոնք հնարավորություն կտան թիրախային երիտասարդների մասնակցությունը ֆորումին:

Գործողություն 2. Նախապատրաստական փուլ II: Ծրագրային I-II ամիսների ընթացքում կհրավիրվեն ֆորումի խոսնակները, էքսպերտները, մոդերատորները և դասընթացավարը:

Գործողություն 3. Պանելային քննարկում: 2-օրյա ֆորումի I օրը իրականացվող պանելային քննարկման թեման է լինելու՝ «Երիտասարդական քաղաքականության մշակումը և դերակատարները», որին ներկա կլինեն ներկայացուցիչներ՝ պետական գերատեսչություններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, Երիտասարդության քաղաքականության մասին օրենքի աշխատանքային խմբից:

Գործողություն 4. 4 Աշխատարաններ: 120 մասնակիցները կմասնակցեն հետևյալ թեմաներով 4 աշխատարաններին՝

Աշխատարան 1. Երիտասարդության կարիքները և պետությունից ունեցած ակնկալիքները
Աշխատարան 2. Երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների կարիքները և պետությունից ունեցած ակնկալիքները
Աշխատարան 3. Երիտասարդական քաղաքականության մշակման անհրաժեշտությունը
Աշխատարան 4. Երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդական աշխատողների և պետության միջև իրավահարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը

Աշխատարանների մոդերատորները կընտրվեն բաց հայտարարությամբ, ԿԳՄՄՆ-ի երիտասարդության վարչության գործընկերների հետ քննարկման արդյունքում:

Գործողություն 5. Էքսպերտային հանդիպում - միջազգային փորձի ներկայացում: Հրավիրյալ փորձագետը կներկայացնի երիտասարդության քաղաքականության մասին օրենքների առկայության, մեթոդաբանության և կիրառելիության միջազգային փորձը, որը հնարավոր կլինի համեմատականներ անցկացնել հայաստանյան իրականության հետ: Հանդիպման էքսպերտը կընտրվի բաց հայտարարությամբ, ԿԳՄՄՆ-ի երիտասարդության վարչության գործընկերների հետ քննարկման արդյունքում:

Գործողություն 6. Դասընթաց քաղաքականությունների մշակման և շահերի պաշտպանության վերաբերյալ: Երիտասարդների մասնակցայնությունը խթանելու գործընթացում շատ կարևոր է հասկանալ քաղաքականությունների մշակման շրջափուլը, և հետագայում նաև կարողանալ կյանքի կոչել այդ քաղաքականությունները: Սա էլ ունենալով հիմքում, այս դասընթացը կլինի օգտակար և արդյունավետ ներդրում երիտասարդների կարողությունների զարգացման գործընթացում: Դասընթացավարը կընտրվի բաց հայտարարությամբ, ԿԳՄՄՆ-ի երիտասարդության վարչության գործընկերների հետ քննարկման արդյունքում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն *Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ*
Ծրագիր *Ամենամյան երիտասարդական ֆորում*
Ժամանակահատված *01.07.2024 - 30.09.2024*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Նախապատրաստական փուլ I (հայտերի ստեղծում, նյութերի դիզայն, հայտարարության տարածում, մասնակիցների ընտրություն)	Ծրագրի ղեկավար - Աննա Թովմասյան Հաշվապահ- Հայկ Խաչատրյան							X	X				
2	Նախապատրաստական փուլ II (խոսնակների, էքսպերտների և մոդերատորների ընտրություն)	Ծրագրի ղեկավար - Աննա Թովմասյան Հաշվապահ- Հայկ Խաչատրյան							X	X				
3	Պանելային քննարկում	Ծրագրի ղեկավար - Աննա Թովմասյան Հաշվապահ- Հայկ Խաչատրյան									X			
4	4 Աշխատարաններ	Ծրագրի ղեկավար - Աննա Թովմասյան									X			

		Հաշվապահ-Հայկ Խաչատրյան												
5	Էքսպերտային հանդիպում - միջազգային փորձի ներկայացում	Ծրագրի ղեկավար - Աննա Թովմասյան Հաշվապահ-Հայկ Խաչատրյան									X			
6	Դասընթաց քաղաքականություն ների մշակման և շահերի պաշտպանության վերաբերյալ	Ծրագրի ղեկավար - Աննա Թովմասյան Հաշվապահ-Հայկ Խաչատրյան									X			

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Ծրագրի շահառուներն են՝

- ՀՀ 10 մարզերի 120 երիտասարդները և երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչները,
- 30 ԼՂ բռնի տեղահանված երիտասարդ,

Ծրագրի շահագրգիռ կողմերն են՝

- ՀՀ ԿԳՄՄՆ
- Պետական գերատեսչություններ
- Հասարակական կազմակերպություններ
- Միջազգային կազմակերպություններ

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Ծրագրի հիմնական ռիսկերը կապված են երկրում հնարավոր ռազմաքաղաքական անկայուն իրավիճակի հետ, որը կարող է ընդհատել կամ ստիպել տեղափոխել ծրագրի համար նախատեսված ժամանակահատվածը այլ՝ ավելի ուշ ժամանակահատվածի:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը և կցել կենսագրականները:

Հ/Հ	Անուն, ազգանուն	Դերը/պատասխանատվության շրջանակը ծրագրում	Աշխատակցի կամ փորձագետի փորձառությունը
1.	Աննա Թովմասյան	Ծրագրի համակարգող	Ունի մոտ 10 տարվա փորձ երիտասարդական աշխատանքի ոլորտում, ներառյալ՝ երիտասարդական քաղաքականության եւ օրենսդրության մշակում եւ բանակցություններ, երիտասարդական ծրագրերի համակարգում, դասընթացների ֆասիլիտացում:
2.	Հայկ Խաչատրյան	Հաշվապահ	Հայկ Խաչատրյանը վարում է կազմակերպության հաշվապահությունը՝ աշխատելով տեղական և միջազգային ծրագրերի հաշվապահության և ֆինանսական զեկույցների մշակման վրա: Հայկ Խաչատրյանը վարում է նաև մի քանի այլ ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահությունը:
3.	Լիանա Թուրյան	Դիզայներ	Լիանա Թուրյանը կազմակերպության հաղորդակցության մասնագետն է, ով նաև զբաղվում է նյութերի դիզայնով, տեքստերի մշակմամբ և կազմակերպության էջերի վարմամբ:
4.	Սոնա Ներսիսյան	Որակավորված գնումների համակարգող	Սոնա Ներսիսյանը հավաստագրված գնումների մասնագետ է (ՀՀ ՖՆ կողմից), 5 տարվա աշխատանքային փորձով:

Հանրահռչակում և Ծրագրի տեսանելիության բարձրացմանն ուղղված քայլեր

Ներկայացնել Ծրագրի հանրայնացման և մարքեթինգային գործողությունների պլանը, միջոցառումների ընթացքի և արդյունքների լուսաբանման եղանակները:

Երիտասարդական ֆորումի համար՝

- Կմշակվի տեսանելիությունը բարձրացնող նյութեր՝ լոգո, բաներ, նոթատետրեր,
- Կհամագործակցենք լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ՝ մամուլի հաղորդագրությունների, հարցազրույցների և գովազդային հոդվածների միջոցով լուսաբանում ապահովելու համար:
- ֆորումի ողջ ընթացքը կլուսանկարահանվի և կտեսանկարահանվի:
- Կպատրաստվեն ֆորումի ընթացքը նկարագրող հատուկ հայտարարություններ և նյութեր սոցիալական հարթակներում տեղադրելու համար:

- Կտեսղծվի ֆորումին առնչվող հատում հեշթեգեր սոցիալական հարթակներում:

Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	Նախապատրաստական փուլ I:	Հայտերի ստեղծում, նյութերի դիզայն, հայտարարության տարածում, մասնակիցների ընտրություն	Կազմակերպելու և իրականացնելու է 120 մասնակցի ընտրությունը	Ընտրված 120 մասնակից	01.07.2024	Համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի	322 000 ՀՀ դրամ
	Նախապատրաստական փուլ II	Խոսնակների, էքսպերտների և մոդերատորների ընտրություն	Կազմակերպելու և իրականացնելու է խոսնակներին, 4 մոդերատորների ընտրությունը	Ընտրված խոսնակներ և 4 մոդերատորներ	20.08.2024	Համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի	420 500 ՀՀ դրամ
	Պանելային քննարկում	Պանելային քննարկում «Երիտասարդական քաղաքականության մշակումը և դերակատարները» թեմայով՝ ներկայացուցիչներ պետական գերատեսչություններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, Երիտասարդության քաղաքականության մասին օրենքի աշխատանքային խմբից	Կազմակերպելու և իրականացնելու է պանելային քննարկում	Պանելային քննարկման իրականացում	20.09.2024	Համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի	3 172 000 ՀՀ դրամ

	4 Աշխատարաններ	120 մասնակիցները կմասնակցեն 4 աշխատարաններին հստակ թեմաներով	Կազմակերպելու և իրականացնելու է 4 աշխատարաններ	120 մասնակցած անձինք 4 աշխատարաններին	20.09.2024	Համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի	
	Էքսպերտային հանդիպում - միջազգային փորձի ներկայացում	Հրավիրյալ փորձագետը կներկայացնի երիտասարդության քաղաքականության մասին օրենքների առկայության, մեթոդաբանության և կիրառելիության միջազգային փորձը, որը հնարավոր կլինի համեմատականներ անցկացնել հայաստանյան իրականության հետ	Կազմակերպելու և իրականացնելու է էքսպերտային հանդիպում - միջազգային փորձի ներկայացում	Էքսպերտային հանդիպում - միջազգային փորձի ներկայացման իրականացում	20.09.2024	Համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի	
	Դասընթաց	Քաղաքականությունների մշակման և շահերի պաշտպանության վերաբերյալ դասընթացի անցկացում	Կազմակերպելու և իրականացնելու է դասընթաց 120 մասնակցի համար	Դասընթաց քաղաքականությունների մշակման և շահերի պաշտպանության վերաբերյալ	20.09.2024	Համաձայն պայմանագրով սահմանված ժամանակացույցի	
	Ամփոփում և հաշվետվության պատրաստում	Ծրագրի ավարտին կպատրաստվի հաշվետվություն	Մշակվելու է ծրագրային հաշվետվությունը	Հաշվետվության ներկայացում	30.09.2024	Բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները կներակայացվեն համաձայն մրցույթի հրավերում սահմանված կարգի: Հաշվետվությունները կներկայացվեն ծրագրի	

						ավարտից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:	
	ԱԱՀ՝	782 900 ՀՀ դրամ					
	Ընդամենը՝	4,697,400 ՀՀ դրամ					

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ նախագահ
Գրիգորի Երիցյան

Կ. Տ.